



Ազդարարության Trumpet's Sound **փող**

55-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱՆԻԱ
ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2024





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ ԵՐԿԱՄՅԱ ԹԵՐԹԸ ՍԻՂՆԵՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԵԿՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՄՆԵՆ Է: Պատասխանատու խմբագիր՝ Խովիվ Հրաչ Գույունճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դու երբեք միայնակ չես Հովիվ՝ Հրաչ Գույունճյան

Սաղմոս 7. Դոն Սթորմը

Անվտանգություն, ուժ և նպատակ Հիսուսի մեջ Դոկտ. Փոլ Ուայթինգ

Ո՛վ մեղք է գործում՝ մեղքի ծառա է. Քաղված

«Կշեռքով կշռվեցիր ու պակաս գտնվեցիր»..... Քաղված

Հազարամյա սուրբ քաղաքը,

Կենաց գեղը և վերջին պատգամներ (2) ՉՄԵԲ պանորամա

Փորձություններ, ինչպիսիք իմն են Նեյլ Բուքման

Հոր (3) Դոն Սթորմը

Անծանոթ Աստվածը Վեր. Հովսեփ Հովսեփյան

Ուրիշների՛ն էլ մասնակից դարձրու Քաղված

Ես չեմ հավատում, որ Աստված գոյություն ունի. Քաղված

Անսակարկելի սերը Քաղված

Դու երբեք միայնակ չես

Կյանքը երբեմն մեզ տանում է շատ վայրեր և ստեղծում իրավիճակներ, որտեղ մենք մեզ մոռացված և միայնակ ենք զգում: Այնուհետև վախը բույն է դնում մեր սրտում, և հենց այստեղ է չարը փափագում պարտված տեսնել մեզ:

Դավիթ թագավորը միշտ առաջնագծում էր: Նա դեմ առ դեմ հանդիպեց թշնամիներից ոչ թե մեկին կամ երկուսին, այլ հազարավորների, որոնք սրերով դուրս էին եկել իր դեմ: Սրա առնչությամբ կարդում ենք Սաղմոսաց գրքում. «Ահա Աստված է իմ օգնականը, Տերը իմ հոգու պաշտպանների հետ է» (Սաղ. 54:4):

Որպես հավատացյալներ՝ մենք ամեն օր բախվում ենք թշնամուն: Շատ իրավիճակներ կարող են առաջանալ, բայց մենք ունենք բազմաթիվ խոստումներ և Սուրբ Հոգու առաջնորդությունը:

Առաքյալը կրկին հիշեցնում է մեզ. «Այնպես որ, համարձակորեն կարող ենք ասել. «Տերը իմ օգնականն է և ես չեմ վախենա: Մարդն ինձ ի՞նչ պիտի անի»» (Եբր. 13:6):

«Միշտ ուրախ եղե՛ք: Անդադար աղոթեցե՛ք: Ամեն ինչում գոհություն մատուցեք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսով» (Ա Թես. 5:16-18):

«Մի՛ վախենա, որովհետև Ես քեզ հետ եմ, մի՛ հուսահատվիր, որովհետև Ես քո Աստվածն եմ. կգորացնեմ քեզ. հիրավի, կօգնեմ քեզ. և Իմ արդարության աջով կհաստատեմ» (Եսայի 41:10):

Այո՛, աշխարհը շատ արագ է փոխվում: 10 տարի առաջ ամեն ինչ այլ էր, բայց Աստված նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Որքան մենք ենք անհամբեր սպասում հափշտակությանը, այնքան էլ Տեր Հիսուսն է անհամբեր սպասում այն օրվան, երբ կհավաքվենք Իր շուրջը՝ գովաբանելու և փառաբանելու Իր սուրբ անունը:

Ահա մի համար, որն ինձ այնքան է օգնել իմ մարտերում. «Վերի՛ն բաների մասին մտածեցեք և ո՛չ թե այն, որ երկրի վրա է» (Կող. 3:2):

Սաղմոս 7

Այս սաղմոսում Դավիթն աղաչում է Տիրոջը՝ օգնել պայքարելու նրանց դեմ, ովքեր հալածում են իրեն: Նա հատուկ անձնավորություն ուներ մտքում, որի անունը Բենիամինցի Քուշ էր: Թե ով է այս մարդը, մեզ հայտնի չէ, բայց նա կարող էր լինել Սավուդ թագավորի մերձավոր դաշնակիցը, որը նույնպես Բենիամինի ցեղից էր: Դավիթը չի նշում հալածանքի պատճառը, քանի որ վստահում է Տիրոջ պաշտպանությանը: Նա օգնության կարիք ուներ, քանի որ վախենում էր հայտնվել այնպիսի իրավիճակում, որ իրեն կտոր-կտոր կանեին:

Կարելի է պատկերացնել, թե ինչպես էր Դավիթը հիշում առյուծից ու արջից ազատված անօգնական գառներին: Հիմա նա մման իրավիճակում էր և իրեն նույնքան խոցելի էր զգում: Այստեղից էլ նրա փրկության աղոթքը:

Թերևս հաճախ ենք անօգնական զգացել այնպես, ինչպես Դավիթը: Երբեմն նայում ենք մեր կյանքին և չենք տեսնում որևէ պատճառ, թե ինչու են մեզ վրա հարձակվում: Դավիթը զննում էր իրեն, բայց չէր գտնում իր մեջ ոչ մի չարություն, որն արդարացներ իր թշնամիների հարձակումը: Իրականում նա հոգ էր տարել իր հակառակորդը դարձած մարդկանց մասին և ազատել նրանց որոշ խնդիրներից: Իրականում նա երկու անգամ հրաժարվել էր Սավուդին վնասելուց, երբ կարող էր անել դա: Մի անգամ Դավիթը թաքուն կտրել էր թագավորի պատմունճանի մի մասը, երբ նա քարանձավում էր: Երկրորդ անգամ նա վերցրել էր թագավորի նիզակն ու սափորը, երբ նա կարող էր սպանել քնած Սավուդին: Նա իսկապես կարող էր ասել, որ չարիքով չի հատուցել այն մարդուն, ով իր հետ խնդիր չուներ:

Դավիթը պատրաստ էր պատիժ կրելու, եթե մեղքի մեջ լիներ: Նա չէր փորձում իր գործած մեղքի համար խուսափել արդար պատժից: Նա բավական պատրաստ էր, որ իր թշնամին հալածի իրեն և իր փառքը հողին հավասարեցնի: Բայց քանի որ նա չկարողացավ ար-

դարություն տեսնել իր առջև ծառացած խնդիրներում, նա Աստծուն խնդրեց դատել իր թշնամիներին:

Դավիթն աղաչում էր Տիրոջը, որ վեր կենա և դատաստան գործի: Նա կարծում է, որ իր թշնամիների կատաղության պատճառով Աստված պետք է ոտքի կանգնի և գործի նրանց դեմ: Սրանում մեզ լավ օրինակ է ցույց տրվում: Մենք չպետք է վրեժխնդիր լինենք այն մարդկանցից, ովքեր արդարացի չեն վարվել մեզ հետ: Աստված մեզ ասում է, որ վրեժխնդրությունն Իրենն է. Իր ժամանակին և Իր ուզած ձևով Նա կգործի մեզ համար: Մեր պարտականությունն է դժվարությունները բերել Տիրոջը և վստահել Նրան՝ համոզված լինելով, որ Նա կգործի Իրեն փառավորելու և մեզ պաշտպանելու համար:

Դավիթը համոզված էր իր անմեղության մեջ այն հարցում, որի համար հարձակման էր ենթարկվել հակառակորդի կողմից և պատրաստ էր, որ Տերը դատի իրեն՝ ըստ արդարության: Բայց սրանից դուրս նա փափագում էր, որ ամբարիշտների չարությանը վերջ դրվի, և արդարները հաստատվեն:

Դավիթը կոչ էր անում Տիրոջը դատել իր թշնամիներին և կասկած չունեն, որ Աստված արդար է: Նա ամեն օր բարկանում էր ամբարիշտների վրա: Եթե մարդը չապաշխարի, նա կդատապարտվի: Մարդիկ հակված են դատաստանին վերաբերող որևէ միտք ապագային վերագրել, բայց մենք պետք է հիշենք Հռոմ. 1:18-ի պատգամը. «Քանզի Աստծո բարկությունը երկնքից հայտնվել է մարդկանց ամբողջ անաստվածության և անիրավության վրա, որոնք ճշմարտությունն անիրավությամբ են արգելափակում»: Դատաստանը ոչ միայն ապագայում է, այլև հիմա. Աստված իրավունք ունի դատելու հիմա:

Ուստի մարդուն պատվիրված է ապաշխարել կամ հանդիպել Աստծո բարկությանը: Եթե նա շարունակի մահացու զենքեր պատրաստել, եթե շարունակի անօրինությամբ վարվել, նա կհայտնվի իր հիմարության թակարդում: Նա նման կլինի մի մարդու, ով թակարդ է գցում իր զոհին բռնելու համար, իսկ հետո ինքն է թակարդն ընկնում:

Սաղմոսեբզում, չնայած իր բոլոր խնդիրներին, շնորհակալություն է հայտնում Տիրոջը և փառաբանություն է երգում Բարձրյալ Տիրոջը: Նա սկսել էր սաղմոսը՝ դիմելով Յահվե Էլոհիմին՝ «Ով իմ Տեր Աստ-

ված», և ավարտել էր՝ երգելով Յահվե Էլիոնին՝ «Բարձրյալ Տիրոջը»։ Այս վերնագիրը մենք առաջին անգամ կարդացինք Մելքիսեդեկի՝ Աբրահամին օրհնելու պատմության մեջ։ Նա դա արեց ամենաբարձրյալ Աստծո անունով։

Երբ բախվում ենք տարբեր տեսակի թշնամիների, ինչպե՞ս ենք արձագանքում։ Արդյոք մենք հարցն Աստծուն ենք հասցնում աղոթքով և թողնում ենք Նրա մոտ պարզ վստահությամբ։ Արդյոք շարունակում ենք գովաբանել Նրան Իր արդարության և մեր հանդեպ Իր բարության համար։

Դոն Սթոյն

Անվտանգություն, ուժ և նպատակ

Հիսուսի մեջ

Հովհ. 14

Աստված ուղարկում է Իր Որդուն՝ մեզ հանգստացնելու և առաջնորդելու։

Կցանկանա՞ք իմանալ ապագան։ Շատերը կարծում են, որ դա մեծ ձեռքբերում է, ուստի դիմում են գուշակների և աստղագետների և հավատում են նրանց ասածներին։ Բայց ես չեմ ուզում ապագան իմանալ։ Ավելի լավ է չիմանալ։ Հին մարգարեները իմանում էին ապագան։ Աստված մարգարեին ասում էր, թե ինչ էր սպասվում ժողովրդին, որպեսզի նա զգուշացներ նրանց։ Միևնույն ժամանակ մարգարեն իմանում էր, թե ինչ էր լինելու իր հետ ապագայում։ Եզեկիելն ապագայում դառնալու էր Իսրայելի նկատմամբ Աստծո դատաստանի խորհրդանիշը։ Աստված ասաց նրան. «Քեզանից վերացնելու եմ քո աչքերի ցանկությունը, սակայն ո՛չ ողբալու ես, ո՛չ էլ լաց լինելու, քո աչքերից թող արցունք չգա՝։ Լռությամբ հեծե՛ծա՛, մեռելի համար սուգ մի՛ պահիր» (Եզեկ. 24:16-17)։ Դա բավական կլիներ ինձ անհանգստացնելու համար։ Եվ Եզեկիելի կինը մահացավ, և նրան արգելվեց սգալ նրա համար։

Հիսուսն իհարկե ամեն ինչ գիտեր ապագայի մասին: Նա գիտեր այն, ինչ սպասվում էր Իրեն, և գիտեր դրա սարսափելիությունը: Նա Իր աշակերտներին ասաց ապագան, բայց նրանք չհասկացան Իրեն: Նա բացատրեց, թե ինչ է դա նշանակում Իր համար. «Հիմա հոգիս խռովված է. և ի՞նչ ասեմ՝ Հա՛յր, փրկի՛ր Ինձ այս ժամից. սակայն հենց այս նպատակի համար Ես եկա այս ժամին: Հա՛յր, փառավորի՛ր Զո անունը: Եվ երկնքից ձայն եկավ, ասելով. «Ես թե՛ փառավորեցի այն, և թե՛ նորից պիտի փառավորեմ»» (Հովհ. 12:27-28): Դուք կարող եք ասել. «Ինչո՞ւ Հիսուսն անհանգստացավ. Նա գիտեր, թե ինչ կա Իր տառապանքից այն կողմ»: Սակայն Նա անհանգիստ էր, խորապես անհանգիստ: Ի վերջո նա կատարյալ մարդ էր: Ես և դուք գիտենք, որ Աստծո խնամքի ներքո ունենք հիանալի ապագա, բայց դա չի խանգարում մեզ անհանգստանալու մեր անմիջական հանգամանքների համար: Հիսուսն անհանգիստ էր, բայց Նա գիտեր, որ Իր բոլոր դժվարություններն Աստծո ձեռքերում են: «Խռովված» բառը ցույց էր տալիս հուզական խոր անհանգստություն և շփոթություն: Միգուցե դուք էլ եք այդպես զգացել: Հետաքրքիր է, կարո՞ղ եք արդյոք արձագանքել Հիսուսի պես: Այո՛, ես խորը նեղության մեջ եմ, բայց Աստված այս ամենի վրա իշխում է, և վերջիվերջո այդ ամենի միջով ինձ կրերի Իր փառքին: Կարող է դժվար լինել, բայց դա Հիսուսի ճանապարհն է:

Հիսուսն Իր աշակերտներին մի քանի մտահոգիչ բան ասաց: Նախ ասաց, որ նրանցից մեկը պատրաստվում է դավաճանելու Իրեն: Այդ միտքը խորապես անհանգստացրեց Հիսուսին: Բայց աշակերտները բոլորովին չէին կարողանում հասկանալ դա: Նրանցից ո՞վ կլիներ դավաճան: Հետո ասաց, որ Իր ժամանակը նրանց հետ գրեթե ավարտվել է: Դա անհմար էր հասկանալ: Նրանք թողել էին իրենց տներն ու աշխատանքը՝ Նրան հետևելու համար: Նրանք երեք տարի միասին հրաշալի ծառայել էին, իսկ հիմա՝ ոչինչ: Արդյոք հենց հիմա՞ է հեռանում: Եվ վերջապես Նա ասաց, որ Իր աշակերտներից մեկը հրապարակայնորեն ուրանալու է Իրեն:

Վերջում Հիսուսն ասաց նրանց. «Թող ձեր սրտերը չխռովվեն»: Ինչո՞ւ: Ինչպե՞ս կարող են չխռովել: Նրանք միշտ հավատացել են Աստծուն, և երկար պատմության ընթացքում Նա երբեք չի լքել նրանց:

Այժմ Հիսուսն ավելացնում է կարևոր տարբերություն. «Աստծուն հավատացեք, նույնպես Ինձ հավատացեք»: Ի՞նչ է Նա ասում նրանց:

Դուք անհանգստություններ ունե՞ք, մտահո՞գ եք ապագայի համար, հիմա դժվարության մե՞ջ եք, հավատո՞ւմ եք Աստծուն, գիտե՞ք, թե ինչպես է Նա գործել անցյալում, ուստի Հիսուսը կարծես ասում է. «Թույլ մի՛ տվեք, որ ձեր սիրտը խռովվի, անհանգստանա, շփոթվի: Դուք հավատում եք Աստծուն, կարող եք վստահել Ինձ այնպես, ինչպես վստահում եք Նրան»: Հիսուսը գիտի, թե ինչ է խորապես անհանգստանալը, շփոթվելն ու խռովելը: Բայց Նա նաև գիտի, որ Աստված Իր հետ է, Իր մեջ է: Հետագայում Նա Իր աշակերտներին կասի, որ նրանք նույնպես կարող են այդպես ապրել Աստծո հետ: Մենք էլ կարող ենք:

Հիսուսը կարծես թե ասում է. «Դուք կարող եք Ինձ վստահել Իմ ով լինելու շնորհիվ»: Հիսուսն ասում է, որ իրականում չի լքում նրանց, քանի որ վերադառնալու է նրանց համար, և նրանք գիտեն, թե Ինքն ուր է գնում: Բայց նրանք չէին հասկանում, այլ պատկերացնում էին ճանապարհորդություն դեպի ինչ-որ հեռավոր երկիր: Հիսուսը ևս մեկ անգամ ուղղում է նրանց դեպի Իրեն. «Թովմա՛ս, և դուք բոլո՛րդ, Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»: Այս զարմանահրաշ պնդման մասին միայն սա ասեմ. Հիսուսը մեզ ճանապարհը ցույց չի տալիս. Ինքն է ճանապարհը և միակ ճանապարհը: Մարդիկ կարծում են, թե կան շատ ուղիներ, և Հիսուսը հստակ սովորեցրել է, որ դրանք գրավիչ են, հեշտ, բայց մոլորեցնող: Ինքը և միայն Ինքն է ապագայի ճանապարհը դեպի Հոր խոստացված երկիր: Եվ դա այն պատճառով, որ Նա նաև ճշմարտությունն է: Այն, ինչ Նա սովորեցնում էր, Աստծո ճշմարտությունն էր: Նրա ապրած կյանքը ցույց տվեց Աստծո ճշմարտությունը, և միայն Նրա մեջ ենք գտնում ճշմարտությունը: Ուրիշները ճշմարիտ հայտարարություններ են արել, բայց միայն Հիսուսն է Իր մեջ մարմնավորել ճշմարտությունը: Սա նշանակում է, որ ճշմարտությունն իմանալու համար պետք է ճանաչել Նրան: Եվ ճանաչելով Նրան՝ որպես ճանապարհի, սիրելով Նրան՝ որպես ճշմարտության, հայտնաբերում ենք, որ Նա է կյանքը՝ Աստծո կյանքը և հավիտենական կյանքը:

Ի՞նչ է սա նշանակում: Մենք կարող ենք վստահել Հիսուսին: «Նա, որ Ինձ տեսավ, Հորը տեսավ» (Հովհ. 14:9):

Բայց վերջապես փաստն այն է, որ այդ սարսափելի մահից, հաղթանակով հարություն առնելուց և Հոր մոտ համբարձվելուց հետո Նա խոստացել է վերադառնալ: Բայց ահա՛ մենք, և Նա դեռ չի վերադարձել: Այդ դեպքում ինչպե՞ս պետք է ապրենք Նրա բացակայության ժամանակ: Նա պատասխանում է այս հարցին 15-րդ համարում. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեցե՛ք»: Այսինքն՝ ապրե՛ք այնպես, ինչպես սովորեցրել եմ: Ապրե՛ք այն ճշմարտության համաձայն, որն այժմ գիտեք: Ապրե՛ք այնպես, ինչպես ցույց եմ տվել: Ապրե՛ք այն սիրով, որը ցույց եմ տվել Իմ կյանքում:

Բայց կա ավելին: Նա խոստանում է, որ այդ ընթացքում կվերադառնա և հավերժ մեզ հետ կլինի այս կյանքում: Եվ Նա դա անում է՝ ուղարկելով Իր Հոգին: «Եվ Ես Հորը պիտի աղաչեմ, և Նա ձեզ ուրիշ Մխիթարիչ պիտի տա, որ ձեզ հետ մնա հավիտյան: Ճշմարտության Հոգին, որին աշխարհը չի կարող ընդունել, քանի որ չի տեսնում Նրան և ո՛չ էլ գիտի Նրան, բայց դուք գիտեք Նրան, որովհետև Նա ձեզ հետ է բնակվում և ձեր մեջ պիտի լինի: Ես ձեզ որք չեմ թողնի. կգամ ձեզ մոտ»: Սա Հիսուսի ուսուցման սկիզբն էր Իր Հոգու գալուստյան մասին: Աշակերտներն անհանգստացած են, շփոթված, վրշտացած, բայց ահա լուծումը. Հիսուսը նրանց մենակ չի թողնի: Նա կգնա, կվերադառնա, բայց այդ ընթացքում Մխիթարիչ կուղարկի, որ նրանց հետ լինի:

Մխիթարիչ, խորհրդական կամ օգնական նշանակում է մեկը, ով կողքդ կկանգնի, կամ մեկը, ով կընկերանա քեզ: Չէ՞ որ դա բոլորին է պետք: Նորից նայե՛ք, թե ինչ է ասում Տերը 17-18 համարներում. «Դուք գիտեք Նրան, որովհետև Նա ձեզ հետ է բնակվում և ձեր մեջ պիտի լինի: Ես ձեզ որք չեմ թողնի. կգամ ձեզ մոտ»: Ո՞վ էր ապրում աշակերտների հետ: Հիսուսը: Ո՞վ էր Նա, ում արդեն ճանաչում էին: Հիսուսը: Իսկ ո՞վ է խոստանում գալ նրանց մոտ: Հիսուսը: Խորհրդականը, ում ուղարկում է Հիսուսը, ոչ այլ ոք է, քան հենց Հիսուսի Հոգին: Եվ Նա նաև Աստծո Հոգին է:

Ի՞նչ է անելու այս Խորհրդականը, այս Մխիթարիչը, ճանապարհի ուղեկիցը: «... Նա պիտի ամեն բան սովորեցնի ձեզ և ձեր միտքը բերի այն ամենը, ինչ Ես ձեզ ասացի»: Նրա առաջին գործը մեզ հիշեցնելն է, թե ինչ է ասել Հիսուսը մեզ: Աշակերտներն այդ ամենը լսել էին, բայց իհարկե նրանց հիշողությունն անկատար էր: Դուք և ես լսել ենք այն, ինչ լսել ենք, կարդացել ենք այն, ինչ կարդացել ենք, և Հոգին դա հիշեցնելու է, որ հնազանդվենք դրան: Բայց Նա չի կարող հիշեցնել այն, ինչ Հիսուսը չի ասել մեզ, ինչը ևս մեկ պատճառ է Աստծո Խոսքն ամեն օր կարդալու համար:

Իսկ ո՞րն է այս Խորհրդատուի միջոցով Հիսուսի տված պարզեր: Խաղաղությունը. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թե՝ ինչպես աշխարհն է տալիս, Ես տալիս եմ ձեզ: Ձեր սիրտը թող չխռովվի, ո՛չ էլ վախենա»: Սա է հարցի պատասխանը: Հիսուսը սկսեց անդրադառնալ աշակերտների խնդիրներին. «Թող ձեր սրտերը չխռովվեն»: Նա ավարտեց Իր խոսքը նույն հավաստիացմամբ: Նա տվեց մեզ Իր խաղաղությունը, ոչ թե մակերեսային խաղաղություն, ինչպիսին աշխարհն է տալիս, այլ խորը և մնայուն խաղաղություն, որ ներթափանցում է այս կյանքի բոլոր անախորժությունների տակ: Թող ձեր սրտերը չխռովվեն, մի՛ վախեցեք:

Մենք իսկապես ունենք անհանգստություններ և մտահոգություններ, բայց ունենք նաև Մեկին, ում կարող ենք վստահել, ով խոստանում է մեզ տանել ճիշտ ճանապարհով, առաջնորդել դեպի ճշմարտությունը և հասցնել հավիտենական կյանքին: Վստահելով Նրան և ապավինելով Նրա Հոգուն՝ մենք խաղաղություն ունենք: Թող ձեր սրտերը չխռովվեն, մի՛ վախեցեք:

Դոկտ. Փոլ Ուայթինգ



Ո՛վ մեղք է գործում՝ մեղքի ծառա է

Ճանապարհով քայլելիս ես ուշադրություն դարձրի մի կնոջ, որը երկու փոքր երեխաների հետ էր: Նրանցից մեկը սալյակի մեջ էր, իսկ մյուսն ուրախ վազվզում էր: Հորդ անձրևը նոր էր դադարել՝ թողնելով բազմաթիվ լճակներ: Լճակներից մեկը, որ մեծ էր ու կեղտոտ, գտնվում էր ընտանիքի ճանապարհի վրա: Նկատելով, որ երեխան ուզում է վազել դրա միջով, մայրը բացականչեց. «Ստիվեն, պետք չէ»: Դժգոհելով ու չհասկանալով, թե ինչու, Ստիվենը հարցրեց. «Ուրեմն որտեղո՞վ գնամ»: Սի՞թե նա չէր տեսնում, որ լճակից այնկողմ մայքը չոր էր: Տղան պարզապես չէր ուզում տեսնել այն, քանի որ մտադրված էր անցնել հենց լճակի միջով:

Այդ պահին ես մտածեցի, որ բազմաթիվ չափահասներ նույնպես մեծ հաճույքով մտնում են կեղտոտ լճակների մեջ (ես նկատի ունեմ մեղքը): Մարդիկ իրենք իրենց պղծում են, քանի որ հեռու չեն մնում այն վայրերից, որտեղ իրենց նվաճում են փորձությունները: Երբեմն նրանք ուզում են ազատվել գայթակղության ճիրաններից, սակայն հաճախ պարզվում է, որ իրենց դուր է գալիս մեղք գործելը: Նրանք չեն կարողանում զսպել իրենց՝ մեղքի թակարդը չընկնելու համար. ցանկությունը գրավում է նրանց:

Աստված չի ուզում, որ մենք գտնվենք մեղքի կապանքներում: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, աշխարհի Փրկիչը, բացել է ազատության և կյանքի ճանապարհը նրանց համար, ովքեր շնչահեղձ են լինում իրենց բեռի տակ:

Եկե՛ք Նրա մոտ ձեր խնդիրներով: Խոստովանե՛ք ձեր անօգնական վիճակը: Նա կարող է ազատել ձեզ, և Նա կանի դա:

Քաղված



«Կշեռքով կշռվեցիր ու պակաս գտնվեցիր»

(Դան. 5:27)

Բարու և չարի վերաբերյալ տարածված է հետևյալ տեսակետը. երբ ապագայում գա հաշվետվության ժամը բոլորիս համար, մեր բարի և չար գործերը դրվելու են կշեռքի հանդիպակաց նժարների և կշռվելու են, իսկ մեր հավիտենական ճակատագիրը որոշվելու է՝ ըստ գերակշռող նժարի:

Աստվածաշունչը՝ Աստծո Խոսքը, այլ բան է ասում. կշեռքով կշռելը երբեք չի կապվում այն մտքի հետ, որ որևէ մեղք կարող է կշռվել բարի գործերի հանդիպակաց նժարով: Աստծո առաջ մարդը կշռվելու է (այսինքն՝ դատվելու է) որպես մի ամբողջականություն՝ իր բոլոր մտքերով և արարքներով:

Հենց սրա մասին է խոսում Դանիել մարգարեն աստվածաշնչյան այսօրվա համարում. սա կրում է նաև մեր սրտի վիճակը «կշռվելու» իմաստը, երբ սրա մասին խոսվում է Աստվածաշնչի ուրիշ հատվածներում: Երբ Աստված, փոխաբերական իմաստով ասած, կշռում է մեզ, Իր սուրբ և արդար պահանջները դրվում են մյուս նժարին, և դրա համար մենք միշտ «պակաս ենք գտնվում»:

Այն օրը, երբ հաշվետվություն տանք (իսկ այդ օրն այնքան էլ հեռու չէ), հաշվի է առնվելու միայն մեկ բան՝ «Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու արյունը», որ մաքրում է մեզ ամեն մեղքից (տե՛ս Ա Հովհ. 1:7-ը): Նա, ով հավատում է Նրան, Նրա արյամբ ունի «փրկություն, մեղքերի թողություն» (Եփես. 1:7) և կարող է միանալ փառաբանությանը. «Նրան, որ մեզ սիրեց ու Իր արյունով մեզ մեր մեղքերից լվաց ... փառք և գործություն Նրան հավիտյանս հավիտենից» (Հայտ. 1:5-6): Ամեն Նրան հավատացողը «դատապարտության պիտի չգա, այլ՝ մահից կյանքի է անցել» (Հովհ. 5:24): Այսպիսին է Աստծո առաջարկած փրկությունն ընդունելու ճանապարհը:



Հազարամյա սուրբ քաղաքը, Կենաց գետը և վերջին պատգամներ (2)

5. Քաղաքի նյութերը (21:18-21)

Այս համարներում կարդում ենք, որ պարիսպը պատրաստված է հասպիսից, իսկ քաղաքը՝ մաքուր ոսկուց: Պարսպի հիմքերը զարդարված են ամեն տեսակի քանկարժեք քարերով: Թվարկված են 12 քանկարժեք քարեր, որոնք համեմատության կարգով մման են Ահարոն քահանայապետի կրծքազարդի տասներկու քանկարժեք քարերին (տե՛ս Ելից 28:17-21-ը): Այնտեղ նրանք կապված էին Իսրայելի տասներկու ցեղերի, իսկ այստեղ՝ Գառան տասներկու առաքյալների հետ:

Նաև կարդում ենք, որ տասներկու դարպասները տասներկու մարգարիտներ են: Տեր Հիսուսն Իր առակներից մեկում եկեղեցին մամնեցրեց քանկարժեք մարգարտի (Մատթ. 13:45-46): Անկախ նրանից, թե քաղաքին որ ուղղությամբ կմոտենանք, միշտ կտեսնենք մարգարտյա դարպասը, որը ներկայացնում է Եկեղեցու գեղեցկությունն ու արժեքը:

«Քաղաքի հրապարակը մաքուր ոսկի էր՝ թափանցիկ ապակու նման» (Հայտ. 21:21): Շատերը մտածում են, որ ոսկին խորհրդանշում է աստվածությունը կամ աստվածային արդարությունը, ուստի այստեղ այդ հատկությունները դրսևորվում են Եկեղեցու միջոցով:

6. Գառնուկը. քաղաքի տաճարն ու լույսը (21:22-27)

Չնայած Հազարամյակի ընթացքում երկրի վրա տաճար կլինի, սակայն սուրբ քաղաքում, որպես այդպիսին, տաճար չի լինի, «...Քանի որ Տեր Աստված Ամենակալն ու Գառնուկը նրա տաճարն են» (Հայտ. 21:22): Ինչպես Տերը բնակվում էր Խորանում Մովսեսի օրերում և տաճարում՝ Սողոմոնի օրերում, այնպես էլ Հազարամյակում Տերը բնակվելու է Իր ժողովրդի մեջ՝ սուրբ քաղաքում:

Ելից գրքում կարդում ենք, որ «մի ամա ծածկեց ժողովքի վրանը. և Տիրոջ փառքը լցրեց խորանը» (Ելից 40:34): Նաև Գ. Թագ. 8:10-11-ում կարդում ենք. «Եվ եղավ, երբ քահանաները Սրբարանից դուրս եկան, ամալը լցրեց Տիրոջ Տունը և ամալի պատճառով քահանաները չէին կարող այնտեղ մնալ ծառայելու համար, քանի որ Տիրոջ փառքը լցրել էր Տիրոջ Տունը»: Եթե Տիրոջ փառքն այնքան շլացուցիչ էր այդ ժամանակներում, ապա ինչպիսի՞ն կլինի այն, երբ Նա բնակվի սուրբ քաղաքում: Այն ամբողջովին կփարատի խավարը, քանի որ կարդում ենք, որ «այնտեղ գիշեր չի լինելու» (Հայտ. 21:25, հմմտ. 22:5): Նույնիսկ «Այն ազգերը... Նրա լույսով են քայլելու» (հմր. 24): Սակայն Հազարամյա թագավորությունում երկրի վրա գտնվողները դեռ կփորձառեն ցերեկը և գիշերը: Ջրհեղեղից հետո Տերն ասաց Նոյին. «Որքան ժամանակ որ երկիրը կմնա, սերմն ու հունձքը, և ցուրտն ու տաքը, ամառն ու ձմեռը, և ցերեկն ու գիշերը չեն դադարի» (Ծննդ. 8:22):

Տասներկու մարգարտյա դարպասները, որոնց պահպանում են 12 հրեշտակները, միշտ բաց կլինեն (հմր. 25): Տերը քաղաքից թագավորելու է ամբողջ երկրի վրա, և թագավորներն ու ազգերը Նրան պիտի բերեն իրենց տուրքը, և իրենց հոտը պիտի բերեն Հազարամյա թագավորության զոհասեղանին ընծայելու (Եսայի 60:7): Թվում է, թե այս գործողությունների կառավարման մեջ կլինի հիերարխիա (աստիճանակարգություն), քանի որ կարդում ենք, որ եկեղեցին թագավորելու է Տիրոջ հետ, և որ տասներկու առաքյալները «... Պիտի նրստեն տասներկու աթոռների վրա՝ Իսրայելի տասներկու ցեղերին դատելու համար» (Բ Տիմ. 2:12, Մատթ. 19:28): Իսկ թագավորներն ու ազգերը կառավարվելու են վերականգնված Իսրայելի ազգի կողմից (Ես. 60:1-22, հմմտ. Բ Օր. 28:13): Այս կերպ ազգերի փառքն ու պատիվը կբերվի քաղաք (հմր. 26):

Այնուհետև կարդում ենք, որ քաղաքը հավերժ մաքուր է լինելու. «Եվ այնտեղ երբեք անմաքրություն չի մտնելու, ոչ էլ պղծություն կամ սուտ գործող, այլ միայն նրանք, որ գրված են Գառնուկի Կենաց գրքում» (հմր. 27):

7. Գետը և Կենաց ծառը (22:1-6)

Հովհաննեսը տեսնում է Կենաց ջրի գետը և Կենաց ծառը: Մեր մտքերը անդրադառնում են Ծննդոց գրքին, որտեղ կարդում ենք Պարտեզի մեջտեղում գտնվող երկու ծառերի և գետի մասին, որը հոսում է Եդեմից՝ Պարտեզը ջրելու համար (տե՛ս Ծննդ. 2:9-10-ը): Այս գետը բաժանվում է չորս ճյուղի՝ Տիգրիս գետը, որի վրա կառուցվել է Նինվեն, Եփրատ գետը, որի վրա կառուցվել է Բաբելոնը: Այսպիսով, մենք նորից տեսնում ենք, թե ինչու է Ծննդոց գիրքը կոչվում Աստվածաշնչի սերմնահող, որովհետև դրանից են մշակվել Սուրբ Գրքի բոլոր հիմնական թեմաները:

Սակայն սուրբ քաղաքում կա ընդամենը մեկ գետ և մեկ ծառ: Այլևս չկա Բաբելոն և չարի գիտության ծառը, որը պետք է քննի մարդուն: Այժմ տեսնում ենք Աստծո սերն ու շնորհը, որը դրսևորվում է քաղաքում և հոսում դեպի Հազարամյա աշխարհ:

Հայտնության գրքում տեսանք բազմաթիվ դատաստաններ, որոնք բխում էին Աստծո գահից: Այժմ Աստծո և Գառն գահից բխում է Կենաց ջրի գետը, որը հոսում է քաղաքի հրապարակով և սնում Կենաց ծառը, որը պտուղ է տալիս, և որի տերևները բժշկություն են ազգերի համար: Պետք է նկատի ունենալ, որ երկրի բնակիչները (վերականգնված Իսրայելը և հեթանոսների «ոչխարները») դեռ կունենան իրենց բնական մարմինները, բայց տերևները կօգնեն՝ նրանց առողջ պահելու:

Սուրբ քաղաքում այլևս անեծք չի լինի, Աստծո գահը և Գառն այնտեղ կլինեն, ծառաները կծառայեն Նրան և կտեսնեն Նրա դեմքը: Նրա անունը կլինի նրանց ճակատների: Նրանք կթագավորեն հավիտյանս հավիտենից (տե՛ս հմր. 3-5-ը): Յնծությամբ ծառայելն ու թագավորելը կշարունակվի Հազարամյակի սահմաններից այն կողմ՝ տանելով մեզ դեպի հավիտենականություն: Ինչպես ավելի վաղ նշվեց, սուրբ քաղաքի բնակիչներն արդեն կհամապատասխանեն հավիտենական վիճակին, իսկ նրանք, ովքեր երկրի վրա կմնան Հազարամյակի վերջում (նրանք, ովքեր չեն խաբվել սատանայի կողմից), կփոխվեն՝ նոր երկրում հավիտենապես ապրելու համար:

Որպեսզի Հովհաննեսի տեսածի և լսածի բացարձակ ճշմարտության և հավաստիության մասին որևէ կասկած չլինի, հրեշտակն ավելացնում է. «Այս խոսքերը հավատարիմ են ու ճշմարիտ. և սուրբ մարգարեների Տեր Աստվածը Իր հրեշտակին ուղարկեց, որպեսզի Իր ծառաներին ցույց տա, թե շուտով ինչ է կատարվելու» (Հայտ. 22:6): Պողոս առաքյալն ասում է. «Որովհետև Աստծո բոլոր խոստումները «Այո» են և «Ամեն» Նրանում, Աստծո փառքի համար՝ մեր միջոցով» (Բ Կորնթ. 1:20): Այսպիսով, մենք կարող ենք վստահ լինել, որ Հայտնության գրքում տրված բոլոր խոստումները կկատարվեն մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից:

8. Հիսուսը շուտով գալու է (22:7-12)

Հիմա ոչ թե հրեշտակը, այլ հենց Տեր Հիսուսը խոսում է՝ ասելով. «Ահա ես շուտով կգամ» (հմբ. 7, հմմտ. 12, 20): Քանի որ Նա շուտով կգա, ուրեմն Նրա գալուստից առաջ տեղի ունենալիք բոլոր իրադարձությունները պետք է մոտալուտ լինեն: Տեր Հիսուսն այնուհետև ավելացնում է. «Երանի նրան, ով կպահի այս գրքի մարգարեության խոսքերը»: Սա Հայտնության գրքում ութ երանություններից 7-րդն է: «Պահել» բառը նշանակում է «զնահատել, արժևորել և գործել ըստ դրա» (W. Scott): Մենք դա կարող ենք անել՝ ապրելով սուրբ և աստվածահաճո կյանքով (հմմտ. Բ Պետ. 3:11-12):

Հովհաննեսն այնքան ճնշվեց իր տեսածից ու լսածից, որ ընկավ հրեշտակի ոտքերի մոտ՝ երկրպագելու: Բայց հրեշտակը կանգնեցրեց նրան և ասաց. «Ձգուշացի՛ր և մի՛ արա այդ բանը, որովհետև ես քո, ինչպես և քո եղբայրների՝ մարգարեների և այս գրքի խոսքերը պահողների ծառայակիցն եմ: Աստծուն երկրպագի՛ր»: (Հայտ. 22:9): Ակնհայտ էր, որ Հովհաննեսը պատրաստվում էր հրեշտակին երկրպագել, բայց Աստված նախանձոտ է, և ամբողջ երկրպագությունը պետք է տրվի Նրան: Հրեշտակների պաշտամունքն արդեն տեղ էր գրավում Հովհաննեսի օրերի եկեղեցիներում, և Պողոսը կողոսացիներին զգուշացրեց դրա մասին (Կող. 2:18):



Փորձություններ, ինչպիսիք իմն են

«Այո՛, այո՛, բայց եթե դու լինեիր իմ տեղում, կիմանայիր, թե որքան դժվար է իմ կյանքը և հաստատ կխղճայիր ինձ: Ես այնքա՛ն եմ տառապում: Դա արդար չէ: Ես արժանի չեմ սրան: Ինչո՞ւ Աստված հոգ չի տանում իմ մասին», - մտածում են շատերը:

Համոզված եմ, որ լսել եք մնան խոսքեր, և եթե ինքներս չենք ասել այդպես, հավանաբար երբեմն մտածել ենք այդպես: Երբ անցնում ենք դժվարությունների և նեղությունների միջով, մեզ համար չափազանց հեշտ է խղճալ ինքներս մեզ և դառնանալ մեր հարևանների, աշխարհի և նույնիսկ Աստծո հանդեպ:

Մենք չենք կարող անտեսել տառապանքը. այս կյանքում այնքան շատ բան է առաջացնում իրական վիշտ ու ցավ: Տեր Հիսուսը խորապես զգաց իր շուրջը գտնվողների տառապանքը՝ արցունքներ թափելով նրանց համար: Սուրբ Գիրքը սովորեցնում է մեզ լաց լինել լացողների հետ (Հռոմ. 12:15):

Տառապանքն իրական է, բայց հնարավոր է փոխել մեր վերաբերմունքը մեր ցավալի փորձառությունների նկատմամբ Աստծո Խոսքում մեզ տրված լույսի միջոցով: Ահա երեք քայլ, որոնք կարող են օգնել՝ փոխելու մութ և հուսահատեցնող փորձառությունը շատ ավելի տանելի և նույնիսկ արդյունավետ փորձառության:

Առաջին՝ հիշե՛ք, որ որպես Աստծո զավակ՝ դուք շատ սիրված եք և երբեք չեք կարող մոռացված կամ լքված լինել: Երբ հավատացինք Տեր Հիսուսին, հասկացանք, որ Նրա խաչը հավիտենապես հաստատել է Աստծո անսահման սերը, և գիտենք, որ Նրա բոլոր փրկագրված զավակները հարություն են առնելու, քանի որ Հիսուսը մեռելներից հարություն է առել: Վերստին ծնունդը ոչ թե Աստծո աշխատանքի ավարտն է ձեր կյանքում, այլ ճանապարհորդության սկիզբը: Նա փառքի է բերում բազմաթիվ որդիների (Եբր. 2:10), և դա նշանակում է, որ Աստված իրականացնում է Իր նպատակը ձեր կյանքում, հատկապես փորձությունների ժամանակ:

Երկրորդ՝ թեև ճշգրիտ չհասկանաք, թե ինչ է Նա անում ձեր փորձությունների ժամանակ, բայց պարզապես հավատացե՛ք, որ Նա լավագույնն է գիտի, թե ինչ է անհրաժեշտ: Ի վերջո, մենք չգիտենք ապագան (Հակ. 4:13-16), չգիտենք հավերժության մասին, և շատ քիչ գիտելիք ունենք նույնիսկ մեր սրտերի մասին (Երեմ. 17:9-10): Գործի՛ դրեք Աստծո իմաստության և սիրո հանդեպ ձեր հավատքը՝ աղոթելով, որ Նա փոխի ձեզ ամեն կերպ, և ապա սպասե՛ք, որ Նա կանի դա:

Երրորդ՝ ապրե՛ք օրը օրին: Հեշտ է ծանրաբեռնվել օրերի, շաբաթների, ամիսների ցավի մասին մտքերով: Լուծե՛ք միայն օրվա խնդիրները՝ վաղվանը թողնելով վաղվա համար: Տեր Հիսուսը խոսեց այս սկզբունքի մասին, երբ ասաց. «Ուրեմն վաղվա մասին հոգ մի՛ արեք, որովհետև վաղվա օրը ինքն իր մասին կհոգա: Օրվա համար իր նեղությունն էլ հերիք է» (Մատթ. 6:34): Ի՞նչ կա ձեր առջև, որ կարելի է անել այսօր: Վե՛ր կաց, շնորհակալություն հայտնիր այսօրվա ողորմության համար և կատարի՛ր օրվա աշխատանքը: Վաղվա աշխատանքը վաղվա համար է:

Երբեք թույլ մի՛ տվեք ինքներդ ձեզ ինքնախղճահարության, դառնության և հուսահատության մեջ խեղդվել: Հավատացե՛ք Աստծուն, նայե՛ք Նրան, որպեսզի կատարի Իր բարի կամքը ձեր մեջ, և ծառայե՛ք Նրան այսօր:

«Հավատարիմ է Աստված, Որով կանչվեցիք Իր Որդու՝ մեր Տեր Հիսուս Զրիստոսի հաղորդակցությամբ» (Ա Կորնթ. 1:9):

Նեյլ Բուքման

«Թող ոչ ոք ինքնիրեն չխաբի: Եթե ձեզնից որևէ մեկը կարծում է, թե ինքն իմաստուն է այս աշխարհում, թող հիմար դառնա, որ իմաստուն լինի: Որովհետև այս աշխարհի իմաստությունն Աստծո առջև հիմարություն է: Քանի որ գրված է. «Նա իմաստուններին բռնում է իրենց խորամանկության մեջ»» (Ա Կորնթ. 3:18-19):

Հոր (3)

Մենք տեսանք այն ծայրահեղ դժվարությունները, որոնց հանդիպեց Հորը:

Հորի հավատքը

Ի՞նչ կարող ենք ասել Հորի մասին: Այս պատմության մեջ կան ուրուշակի ճշմարտություններ նրա մասին, որոնք աչքի են ընկնում: Առաջինը այն բարձր գնահատականն է, որ Աստված տվեց նրան: Երկրորդը Աստծուն անիծելուց հրաժարվելն էր: Թեև Հորը շատ բան էր կորցրել սատանայի առաջին հարձակման ժամանակ, սակայն նա Աստծուն չմեղադրեց սխալ արարքի մեջ: Նա պաշտում էր Նրան:

Սատանայի երկրորդ հարձակումից հետո Հորի կինը տատանվում էր Աստծո հանդեպ իր վստահության մեջ: Նա Հորին խորհուրդ տվեց անիծել Աստծուն և մեռնել: Բայց Հորը պահպանեց իր ամարատությունը՝ ասելով կնոջը, որ հիմար կանանց մման է խոսում: Ավելի ուշ նա կհայտնեի Աստծուն իր վճռական վստահությունը. «Եթե նույնիսկ Նա սպանի ինձ, ես Նրան եմ հուսալու. սակայն Նրա առջև պաշտպանելու եմ իմ ճամփաները» (13:15):

Երբ Հորը խոսում էր իրեն այցելողների հետ, բացահայտորեն հայտարարում էր իր համոզմունքները: Այս հայտարարություններից մի քանիսը ներկայացնում են մի հասկացողություն, որը շատ ավելին է, քան մենք ակնկալում ենք Հին Կտակարանի սրբից: Մտածե՛ք հարության հանդեպ նրա հավատքի մասին: Մտաբերե՛ք խոսքերը, որոնք նա փափագում էր, որ հավիտյան փորագրվեն ժայռի վրա. «Քանի որ գիտեմ՝ իմ Փրկագնողն ապրում է, ու վերջին օրը Նա կանգնելու է երկրի վրա. ու թեկուզ մաշկիցս հետո որդերը կործանեն այս մարմինը, դարձյալ իմ մարմնով տեսնելու եմ Աստծուն, ում ես ինքս եմ տեսնելու, ու իմ աչքերն են դիտելու Նրան, և ոչ թե ուրիշինը, թեև երիկամունքս իմ մեջ հալչում են» (19:25-27):

Հորը նաև գիտեր, որ Աստված շատ բարձր է իրենից. «Քանի որ ինձ նման մարդ չէ, որ ես Նրան պատասխան տամ, ու միասին դա-

տաստանի գնանք: Մեր միջև մի միջնորդ դատավոր չկա, որ ձեռքը մեր երկուսի վրա դնի»:

Մենք՝ Նոր Կտակարանի շրջանում ապրողներս, գիտենք, որ կա մեկը, ով կարող է կամրջել Աստծո և մարդու միջև եղած անդունդը: Իսկապես կա միջնորդ Աստծո և մարդու միջև:

Այնուամենայնիվ, Հոբն Աստված չէր, հետևաբար և չգիտեր, թե ինչ է կատարվում իր հետ: Նա հավատում էր, որ իր կյանքում չկա մի բան, որ կարող էր բացատրել կատարվածը: Մենք՝ պատմությունը կարդացողներս, առավելություն ունենք՝ իմանալու այն, ինչ Հոբը չգիտեր և չէր կարող իմանալ՝ հաշվի առնելով այն փորձությունը, որ Աստված թույլ էր տվել նրան փորձառել:

Քանի որ Հոբը հնարավորություն չուներ իմանալու, թե ինչ է տեղի ունենում, եզրակացրեց, որ Աստված է իրեն դժվարություններ պատճառողը: Հետևաբար նա արտահայտեց մտքեր, որոնք կարող էր չարտահայտել ավելի երջանիկ հանգամանքներում: Եկեք ինքներս մեզ հարցնենք՝ արդյոք նույն սխալը կանեի՞նք մնանատիպ հանգամանքներում:

Աստված խոսում է

Միգուցե մենք պայքարում ենք Հոբի, նրա այցելուների պահանջների ու դրանք մերժելու դեմ, բայց թողնում ենք նրանց և լսում Աստծուն: Աստված հորձանուտից պատասխանեց Հոբին այնպիսի հարցերով, որոնք ստիպեցին նրան գիտակցել մի կողմից Աստծո մեծությունն ու վեհությունը, մյուս կողմից՝ իր աննշանությունը: Աստված բազմաթիվ հարցեր ուներ, որոնք ցույց էին տալիս Իր գիտելիքն ու վերահսկումը Իր ստեղծագործության առնչությամբ, միևնույն ժամանակ՝ Հոբի չիմացությունը: Աստված ավարտեց Իր ուղերձի առաջին մասը՝ հարցնելով Հոբին, թե արդյոք նա, ով վիճում է Ամենակարողի հետ, կուղղի՞ Նրան:

Հոբը միայն մեկ պատասխան ուներ. նա ստորադաս էր, և միակ բանը, որ կարող էր անել, բերանը փակելն էր ու լռելը: Աստված շարունակեց հարցնել Հոբին՝ արդյոք նա կդատապարտի՞ Աստծուն արարանալու համար: Աստված շատ հարցեր տվեց Հոբին Իր արար-

չագործության և դրանք վերահսկելու մասին: Եթե նա կառավարեր տիեզերքը, պետք է գործ ունենար այնպիսի գազանների հետ, ինչպիսիք են բեհեմոթը և լևիաթանը: Բայց այս կենդանիներին կառավարելը շատ վեր էր Հոբի կարողությունից:

Հորը կարող էր միայն խոստովանել, որ խոսում է իր համար անհասկանալի բաների մասին: Տեսնելով Աստծո մեծությունը՝ նա կարող էր միայն զգվել իրենից և ապաշխարել փոշու ու մոխրի մեջ:

Այնուամենայնիվ, այս պահին մենք լսում ենք անսպասելի մի պատգամ. Հորը չդատապարտվեց: Եղիփազն ու նրա ընկերները դատապարտվեցին Աստծո մասին ճիշտ խոսքեր չասելու համար՝ ի տարբերություն Նրա ծառա Հոբի: Նրանք պետք է ընծա վերցնեին և գնալին Հոբի մոտ, որպեսզի նա մատուցեր այն իրենց անունից: Աստված կընդուներ զոհը, եթե Հորը մատուցեր այն:

Գիրքն ավարտվում է Հոբի օրհնությամբ: Նրա ունեցվածքը կրրկնապատկվեց մախկիմի համեմատ, և նրան տրվեց ևս 7 որդի և 3 դուստր: Եթե հարցնենք, թե ինչու նա երկու անգամ ավելի ունեցվածք ստացավ, բայց մույն թվով երեխաներ, պատասխանը հարությունն է՝ Հոբի հավատքի կենտրոնական հատկանիշը: Հարության ժամանակ նրան հնարավոր եղավ մորից տեսնել իր առաջին յոթ երեխաներին:

Թող Հակոբոսի մեկնաբանությունը լինի մեր եզրափակիչ միտքը. «Ահա երանի ենք տալիս համբերողներին: Դուք լսել եք Հոբի համբերության մասին և գիտեք, թե Տերը նրան ինչ վախճան տվեց, որ Տերը գթառատ է ու ողորմած» (Հակ. 5:11):

Մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն, որ Նա չի ենթարկում մեզ Հոբի փորձությանը: Բայց այն, ինչ տեսնում ենք, Տիրոջ կարեկցանքն ու ողորմությունն է: Թեև բախվենք փորձությունների և գայթակղությունների, Նա թույլ չի տա, որ մեր ուժերից վեր փորձվենք:

Դոն Սթոն



Անծանոթ Աստվածը

Գործք 17:16-34

Աթենքը միշտ հայտնի է եղել որպես կրոնական և մշակութային կենտրոն: Սակայն Պողոս առաքյալը միայն մեղք ու սնահավատություն տեսավ այնտեղ: Ըստ էության՝ ինչպես մի հեղինակ է գրել. «Աթենքում ավելի հեշտ էր կուռք գտնել, քան մարդ»: Այդ օրերին Աթենքի ժողովուրդը ղեկավարվում էր փիլիսոփայական երկու հիմնական ուղղություններով՝ ստոիկյան և էպիկուրյան: Ստոիկները մատերիալիստ էին ու ֆատալիստ (ճակատագրապաշտ): Նրանց աստվածը բնությունն էր, և նրանք հավատում էին, որ գիտության միակ իմաստը մարդուն օգնելն է, որպեսզի նա իր տեղը գտնի բնության մեջ: Էպիկուրյանները Էպիկուրի հետևորդներն էին: Էպիկուրը հույն փիլիսոփա էր, որը սովորեցնում էր, որ հաճույքը բարի է, իսկ ցավը՝ չար: Այդ մարդիկ աթեիստներ էին:

Պողոսը երկու խիստ տարբեր փիլիսոփայական ուղղությունների մեջտեղում էր: Ուստի նա գնաց Արիսպագոս՝ Աթենքի պետական դատարան: Այնտեղ Պողոսը հրաշալի կերպով քարոզեց Բարի լուրի մասին: Նա խոսքն սկսեց քաղաքավարի կերպով. «Տեսնում եմ, որ չափազանց կրոնասեր եք...», անդրադարձավ «անծանոթ Աստծո» գոհասեղանին, այնուհետև նրանց ներկայացրեց ճշմարիտ ու կենդանի Աստծուն, որը դեռևս անծանոթ էր նրանց: Նա Աստծո մասին չորս հիմնալի ճշմարտություն ներկայացրեց.

Աստված է Արարիչը

Հույներն արարչագործության մասին տարբեր տեսությունների էին հավատում, այդ թվում՝ Էվոլյուցիայի տարբեր ձևերին: Պողոսը նրանց հստակորեն ասում է, որ Աստված է ստեղծել ամեն բան, և չի ապրում մարդկանց տաճարներում: Նա կյանք է տալիս բոլորին, իսկ մարդն իրականում ոչինչ չի կարող նրան տալ:

Աստված է Գերիշխանը

Աստված ամենուրեք կառավարում է մարդկանց և ազգերին: Պողո-

սը դարձյալ շատ դիվանագիտորեն մատնանշում է, որ նրանց տաճարներն ու սրբապատկերները փուչ ու անհեթեթ բաներ են:

Աստված է Փրկիչ

Պողոսը ոչնչացրեց հունական մեծ մշակույթը՝ անվանելով «տգիտության ժամանակներ»։ Իրենց ողջ իմաստությամբ և մշակույթով նրանք չէին կարողացել գտնել Աստծուն:

Աստված է Դատավորը

Աստված դատաստանի օր է նշանակել, և նրանց դատավորը լինելու է Իր Որդին՝ Հիսուս Քրիստոսը.

«Այն օրը, որ մարդկանց ծածուկ բաները կդատի իմ Ավետարանի համեմատ Հիսուս Քրիստոսի ձեռքով...» (Հռոմ. 2:16):

Հույները տարբեր ձևով արձագանքեցին. ոմանք ծաղրեցին Պողոսին, ոմանք ձայն չհանեցին, բայց մի քանիսն էլ հավատացին: Նորահավատներից մեկը Դիոնիսիոսն էր՝ դատարանի կարևոր պաշտոնյաներից մեկը: Գործքի այս հատվածում ներկայացվում են Ավետարանի նկատմամբ երեք տարբեր մոտեցումներ, որոնք առկա են նաև այժմյան հասարակության մեջ: Ոմանք բացահայտ կերպով հակառակվում են Աստծո Խոսքին, ոմանք ծաղրում են այն, ոմանք էլ հետաձգում են իրենց որոշումը: Մի քանիսն էլ ընդունում են ու հավատում: Իսկ ի՞նչ կասես քո մասին:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

«Եթե ձեզանից մեկը ուրիշի հետ մի խնդիր ունենա, կհամարձակվի՞ սրբերի փոխարեն դատի գնալ անիրավների առջև: Չգիտե՞ք, որ սրբերը պիտի դատեն աշխարհը: Եվ եթե աշխարհը ձեզանով պիտի դատվի, ապա դուք արժանի չե՞ք ձեր մեջ չնչին դատեր վարելու: Չգիտե՞ք, որ մենք հրեշտակներին պիտի դատենք, հապա որքան ավելի այս կյանքին վերաբերող բաները» (Ա Կորնթ. 6:1-3):

Ուրիշների՛ն էլ մասնակից դարձրու

Առանց բացառության՝ յուրաքանչյուր հավատացյալ, Աստծուց շատ բարիքներ և հոգևոր օրհնություններ է վայելել: Սակայն դժբախտաբար մեզանից շատ քչերն են դրանք փոխանցել ուրիշներին:

Դա է բուն պատճառը, որ այսօր շատերն Ավետարանի ձրի փրկության լուրից անտեղյակ են և ապրում են դրա տված օրհնությունից ու վայելքից զրկված: Հետևյալ եղելությունը թող անմահ հոգիների հանդեպ մեր ունեցած սրբազան պարտականության գիտակցություն պարզևող միջոց լինի:

Դեպքերը պատմողը մեզ ծանոթ հավատացյալ խմբագիր է, որի գրած գրքերից մեկում կարդացինք հետևյալը:

Շատ հին տան մեջ էինք ապրում, որի բակում հարյուրամյա հրակայական մի թզենի կար, երկու խոշոր որթատունկ ու մեծ նարնջենի: Երեկ ատաղձագործը եկել էր տան մեջ որոշ նորոգություններ անելու: Իր հետ բերել էր ինը տարեկան սևուիկ, աչքը բաց մի պատանու՝ որպես օգնականի: Որթատունկերի վրա շատ խաղող կար: Տիկինն որոշել էր դրանցով քաղցրեղեն պատրաստել մեզ համար:

Նկատեցի, որ մանչուկի աչքերը, շարունակ շեղվելով իր գործից, կենտրոնանում էին կախված խաղողի հյութեղ և ախորժակ գրգռող ողկույզների վրա:

Խղճալով տղային՝ մոտեցա և ականջին այսպես ասացի.

- Թույլ կտամ, որ ուտես սրանցից այնքան, որքան ուզես ու որքան կկարողանաս, սակայն զգո՛ւյշ եղիր, որ գետինը չաղտոտես:

Այս ասելով՝ հեռացա: Երբ կեսօրից հետո վերադարձա ու բակ մտա, ի՜նչ տեսնեմ: Մեր մանչուկն իր պես չորս տղա ևս հավաքել է շուրջը: Նրանք էլ նրա պես սևուիկ և խաղողի սիրահար էին: Որթատունկերից մեկի վրա գրեթե բան չէր մնացել: Բնության զարմանալի և անբացատրելի մի իրականությունն էլ այդ տարիքի պատանիների

ստամոքսն է. մարդ չի հասկանում այդքան խաղող որտեղ էին կարողացել տեղավորել: Ստիպված համակերպեցի կացության հետ ու ձայն չհանեցի: Սակայն չգիտեի՝ տնեցիներն ի՞նչ կասեին, երբ իմանային խաղողի անհետացման մասին, որ քաղցրեղենի համար էր նախատեսված:

Այս դեպքից սովորելու մեծ դաս կա մեզ համար: Երբ պատանին առատ պտուղ գտավ, բարի լուրը ինքնիրեն չպահեց, այլ այն անմիջապես հաղորդեց իր թաղի ընկերներին: Իր պատառը առանձին չկերավ (Հոբ 31:17), այլ ուրիշներին էլ մասնակից արեց նույն վայելքին:

Այն, ինչ արեց Անդրեասը՝ Սիմոնին, և Փիլիպպոսը՝ Նաթանայելին (Հովհ. 1:40-46):

Բնագիտության դասագրքում կարդում ենք:

Մի մարդ սեղանին մի քիչ քաղցրավենիք է դնում, կողքն էլ՝ մի մրջյուն: Չարմանքը մեծ է լինում, երբ տեսնում է, որ մրջյունը, սեղանի ոտքերից մեկով ցած իջնելով, փնտրում ու գտնում է իր ընկերներին: Քիչ ժամանակ հետո մրջյունների երկար շարանն իր առաջնորդությամբ ուղղվում է քաղցրավենիքի կողմը՝ այն վայելելու համար: Նրանք իրենց լեզվով հասկացել էին իրենց ընկերոջ ասածները և հետևել էին նրան:

Մեզանից շատերը, որ փորձառել ենք Հիսուսի քաղցրությունը, վայելել ենք Ավետարանի սքանչելի խոստումները (փրկություն, վերստին ծնունդ և պես-պես օրհնություններ), դժբախտաբար դրանք միայն մեզ ենք պահել՝ ուրիշներին էլ փոխանցելու փոխարեն: Ուստի այսօր մրջյունից դաս քաղենք՝ Ավետարանի բարի լուրը և մեր վայելած օրհնությունները դրանք չփորձառողներին հասցնելու. «Մրջյունի մոտ գնա, ո՛վ ծույլ, դիտի՛ր նրա ճամփաներն ու իմաստո՛ւն եղի՛ր» (Առակ. 6:6):

Քաղված՝ «Զմայլելի դրվագներ» գրքից



Ես չեմ հավատում, որ Աստված գոյություն ունի

- Ես չեմ հավատում, որ Աստված գոյություն ունի, - վստահորեն ասաց վարսավիր Մայքը:

Պատմությունն այսպես սկսեց: Բիլը գնաց վարսավիրանոց՝ մազերը և մորուքը կտրելու: Երբ վարսավիրն անցավ իր գործին, նրանք սկսեցին լավ զրուցել՝ սովորականի պես պատմություններ պատմելով: Նրանք խոսեցին քաղաքականության, ընտրությունների, տնտեսական վիճակի, իրենց ընտանիքների ու երեխաների մասին:

- Ճիշտ է. Աստված գոյություն չունի:

Երբ նրանք ի վերջո անդրադարձան Աստծո թեմային, Մայքն ասաց.

- Ես չեմ հավատում, որ Աստված գոյություն ունի:

- Ինչո՞ւ ես այդպես ասում, - հարցրեց Բիլը:

- Դե՛, ուղղակի պետք է դուրս գաս փողոց՝ հասկանալու, որ Աստված գոյություն չունի: Բի՛լ, եթե Աստված գոյություն ունենար, ապա այսքան հիվանդ մարդիկ կլինեի՞ն: Կլինեի՞ն լքված երեխաներ: Եթե Աստված գոյություն ունենար, ապա չէր լինի ո՛չ տառապանք, ո՛չ ցավ, ո՛չ լաց: Ես չեմ կարող պատկերացնել սիրող Աստծուն, որը թույլ կտա այս ամենը:

Բիլը մի պահ մտածեց, բայց չպատասխանեց, քանի որ չէր ուզում վեճ սկսել: Մայքն ավարտեց իր գործը, և Բիլը դուրս եկավ վարսավիրանոցից: Դուրս գալուց անմիջապես հետո նա փողոցում տեսավ երկար, կեղտոտ մազերով և չհարթված մորուքով մի տղամարդ: Նա կեղտոտ ու անխնամ տեսք ուներ:

Բիլը ետ դարձավ, նորից մտավ վարսավիրանոց և ասաց Մայքին.

- Գիտե՞ս ինչ, վարսավիրներ գոյություն չունեն:

- Ինչպե՞ս կարող ես դա ասել, - հարցրեց զարմացած վարսավիրը.

- Ես այստեղ եմ, և ես վարսավիր եմ:

- Ո՛չ, - բացականչեց Բիլը, - վարսավիրներ գոյություն չունեն, որովհետև եթե գոյություն ունենային, ապա կեղտոտ, երկար մազերով և չհարթված մորուքներով մարդիկ չէին լինի, ինչպես դրսում գտնվող այդ մարդը:

- Բայց վարսավիրներ գոյություն ունեն: Ահա թե ինչ է լինում, երբ մարդիկ ինձ մոտ չեն գալիս, - ասաց Մայքը:

- Հենց դա է իմաստը: Աստված նույնպես գոյություն ունի: Եվ դա այն է, ինչ լինում է, երբ մարդիկ չեն գալիս Աստծո մոտ:

Քաղված

Անսակարկելի սերը

Ձբաղված առավոտ էր: Ժամը 8:30-ի սահմաններում ութսունամյա շնորհալի տարեց մի մարդ բժիշկի մոտ եկավ՝ բթամատի վրայի կարերը հանելու: Նա ասաց, որ շտապում է, քանի որ ժամը 9-ին ժամադրություն ունի:

Բուժքույրը չափեց տարեց մարդու ջերմությունը և արյան ճնշումը, ապա խնդրեց, որ սպասի բժիշկին, սակայն գիտեր, որ մեկ ժամից ավելի պիտի սպասի: Բուժքույրը բարի էր և երբ նկատեց, որ մարդը հաճախ ժամացույցին է նայում, որոշեց անձամբ քննել նրա բթամատը. երբ տեսավ, որ վերքը բուժված է, բժիշկներից մեկից վերցրեց անհրաժեշտ ցուցմունքն ու գործիքը և գործի անցավ: Մինչ քանդում էր կարերը, կինը սկսեց զրուցել տարեց մարդու հետ: Հարցրեց, թե արդյոք ուրիշ բժիշկի հետ է ժամադրված այդ առավոտ, որ այդքան շտապում է:

- Ո՛չ, - պատասխանեց մարդը և բացատրեց, որ պետք է ծերանոց հասնի՝ տիկնոջ հետ նախաճաշ անելու:

Երբ խոսակցությունը շարունակեցին, բուժքույրը հարցրեց՝ ուշանալու դեպքում արդյոք տիկինը կնեղվե՞ր: Մարդը պատասխանեց,

որ կինը ավելի քան հինգ տարի է՝ իրեն չի ճանաչում, քանի որ տառապում է հիշողության կորուստ հիվանդությամբ:

Չարմացած բուժքույրը հարցրեց.

- Ամեն առավոտ նրա մո՞տ եք գնում, չնայած որ նա ձեզ չի ճանաչում:

Մարդը ժպտալով շոյեց բուժքրոջ ձեռքը և ասաց.

- Թեև կինս այլևս չի ճանաչում ինձ, բայց ես ճանաչում եմ իրեն և գիտեմ, թե նա ով է:

Բուժքույրն արցունքը զսպեց, մինչ մարդը հեռանում էր հիվանդանոցից, մարմինը փշաքաղվեց և նա մտածեց. «Այս տեսակ սեր եմ ուզում կյանքիս մեջ»:

Ճշմարիտ սերը ո՛չ ֆիզիկական է, ո՛չ զգացական: Ճշմարիտ սերը ապագան ընդունելն է, ինչպիսին որ է: Ամենաերջանիկ մարդիկ նրանք չեն, որ ամեն բանի լավագույնը ունեն, այլ նրանք, որ իրենց ունեցածը լավագույն կերպով են օգտագործում: Մենք կարող ենք մոռանալ Աստծուն և Նրա սերը, բայց Նա երբեք մեզ չի մոռանա:

«Սի՞րե կինը կմոռանա իր կաթնակեր մանկանը, կամ չի գթա իր արգանդի ծննդին. հիրավի, նրանք կարող են մոռանալ, Ես, սակայն, քեզ չեմ մոռանա» (Եսայի 49:15):

Զաղված